

ԿԱՑՈՒԹԻՒՆԸ ՊԱՅԹՈՒՑԻԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ԱՏՐՊԵՅՃԱՆԻ ՄԷՋ

Վերջին մի քանի օրերուն հայերու եւ ազերիներու նոր բախումներ պատահած են, բայց անոնց հաշուելիս չուրջ ոչ մէկ մանրամասնութիւն կը հաղորդուի խորհրդային մամուլին կամ միջազգային լրատու սպասարկութիւններու կողմէ: Անդրադառնալով այդ մասին եղած արտաքին նախարարութեան բանբեր Կենատի լրատմով ըսաւ, թէ եղածը «նոյն ընտանիքի միջեւ ծագած մըն է»:

Ատրպէյճանի մայրաքաղաք Պաքուի մէջ, Լենինի հրապարակը, որ անցեալ ամիսէն ի վեր թատերավայր հանդիսացաւ հակահայ ցոյցերու եւ միթիւնկներու, փակուեցաւ անակին կողմէ, անոր բոլոր անցքերուն վրայ զինուորական կառքեր եւ ուժեր հաստատուելով: Ատրպէյճանի արտաքին նախարարութեան բանբեր Էվչին Պաղիրով այս միջոցումներուն մասին բացատրութիւններ տալով ըսաւ, թէ անոնք որոշուեցան Կիրակի օրուան հաւաքոյթի ցրուումէն ետք, երբ «երկուքէն երեք հազար» ազերի երիտասարդներ աւաքուած էին հոն: Հաւաքուածները ցրուեցան ոստիկանական ուժերուն կողմէ եւ այդ պահուն պատահած բախումները պատճառեցին մօտ 30 վիրաւորներ: Պաղիրով ըսաւ նաեւ թէ եղան ձերբակալութիւններ, բայց չճշդեց թէ քանի՞ զինուորական ձերբակալուածները:

Պաղիրով բացարձակապէս հերքեց այն լուրերը, թէ Կիրակի օրուան բախումներուն եղած են նաեւ մեռեալներ, ըսաւ թէ այժմ հրապարակը մաքրելու աշխատանքներ

կը տարուին, հաւանաբար կը նորոգուին նաեւ քանդուած վայրերը: Պաղիրովի այս յայտարարութիւնները կասկածելի են, որովհետեւ ոչ մէկ պարագայի ոստիկանութիւնը միջամտած էր ցարդ ցրուելու համար ազերի ցուցարարները: Շատ հաւանական է որ այդ միջամտութիւնը կատարուած է խորհրդային բանակային ուժերու կողմէ:

Ցուցարարները ցրուելէ առաջ, ըստ Պաղիրովի, Պաքուի քաղաքապետական խորհուրդի նախագահ Նիազի Քարաքաչի կողմէ ըրած է ցրուելու, բայց կը թուի թէ զինք մտիկ չեն ըրած, ասոր վրայ մայրաքաղաքի դատախազն ու բանակի հրամանատարը տուած են հրահանգ՝ բռնի ուժով ցրուելու զանոնք: Ոստիկանութիւնը, եղբակացուցած է Պաղիրով, զէնք չէ գործածած, թէեւ լսուած է հրացանաձգութիւն: Պաղիրով կ'ըսէ թէ կրակոցը եղած է վախցնելու համար ցուցարարները:

Խորհրդային Միութեան արտաքին նախարարութեան տեղեկատու սպասարկութեան փոխ պատասխանատու Վատիմ Փորֆիրիեւ մամուլի ասուլիսի մը ընթացքին ըսած է թէ վերջին երեք օրերուն երեք ազերիներ մեռած են Ատրպէյճանի մէջ եւ վեց ուրիշներ վիրաւորուած, որոնցմէ երեքը զինուորներ են: Փորֆիրիեւ ոչ մէկ յաւելեալ մանրամասնութիւն տուած է, այլ միայն յայտնած է թէ անոնք չեն մեռած Պաքուի մէջ ցոյցերու ցրուումին ընթացքին: Պաղիրով ըսած է թէ ինք լուր չունի այդ երեք մահերէն:

Փորֆիրիեւ աւելցուցած է թէ Համայնավար կուսակցութեան քաղաքական պիւտոյի անդամներէն շատեր մաս կը կազմեն Անդրկովկասի տազնապի լուծման համար կազմուած յանձնախումբին, անդամներ՝ որոնք լաւատեղեակ են Հայաստանի, Ատրպէյճանի եւ Լեռնային Ղարաբաղի ղեկավարներուն մտահոգութիւններուն:

Պաքուի մէջ կացութիւնը հանդարտած է Երեքշաբթի օր, Կիրակի եւ Երկուշաբթի օրերը շատ խռովեալ վիճակ մը ունենալէ ետք, իրրեւ հետեւանք Կիրակիի ցոյցերուն ընթացքին պատահած բախումներուն եւ մահերուն: Պաղիրով ըսած է թէ Պաքուի հիմնարկներուն մեծամասնութիւնը սկսած է բանիլ Երեքշաբթի օրուանէ սկսեալ, բայց ընդդժած է թէ Հայաստանէն դաղթած ազերիներու տեղաւորումը, որոնց թիւը 130 հազարի կը հասնի, մեծ դժուարութիւններ կը յարուցանէ տեղւոյն իշխանութիւններուն համար:

Հայաստանի մէջ կրակմար հաստատուած է երկրի 37 շրջաններէն 16ին մէջ, բայց կացութիւնը յարաբերաբար բնականոն է, ըսած է «Արմենիա»-ի թղթակիցներէն մին օտար թղթակիցի մը: Փորֆիրիեւ իր Երեքշաբթի օրուան մամուլի ասուլիսին ըսած էր թէ Հայաստանի մէջ կացութիւնը շատ աւելի բնականոն է քան թէ Ատրպէյճանի մէջ:

«Արմենիա»-ի թղթակիցը աւելցուցած է թէ Ատրպէյճանէն փախուստ տուող հայերու տեղաւորումն ալ մեծ դժուարութիւններ կը յարուցանէ: Կարդ մը հայեր Ատրպէյճանէն դաղթած են Դաշնակցային Ռուսիոյ հարաւը եւ Կեդրոնական Ասիա: